ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
26.03.2026 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
հասարակական կազմակերպության 2025 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝			
1.1 Լրիվ անվանումը			«ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
1.2 ՀՎՀՀ-ն			01537721
1.3 Գտնվելու վայրը			ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 28
1.4 Պետական գրանցման համարը			211.171.991003
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը			2000-12-06
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)			+(374)10000000
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը			www.highfest.am
1.8 Էլեկտրոնային փոստը			highfest@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝			
Անունը	Ազգանունը		Պաշտոնը
ԱՐԹՈՒՐ	ՂՈՒԿԱՍՅԱՆ		նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը			
Հոգևոր և ոչ նյութական պահանջմունքների բավարարում			
ՀՀ հասարակության ժամանակակից մշակութային զարգացում			
Մշակույթի ոլորտի հանրաճանաչություն և զարգացում			
Թատերական արվեստի, կինոյի և արվեստի այլ բնագավառներում ժամանակակից մեթոդների արմատավորում			
Ստեղծագործական նախաձեռնության և երիտասարդ արվեստագետներիինքնահաստատման աջակցում			
Ժամանակակից հայ մշակույթի կատարողական արվեստի կառավարման բնագավառի համար մշակութային տարածքների ստեղծում			
Նպաստում ՀՀ կարևորագույն մշակութային իրադարձությունների կոորդինացմանը, արվեստագետների միջև կապերի, փոխըմբռնման խթանմանը			
Տարբեր երկրներիհետ համատեղ ծրագրերի իրագործում			
Թատերա-երաժշտական շոու հանդեսների, փառատոնների կազմակերպում			
Հայ թատրոնի արժանիքների պրոպագանդում			
4 Հասարակական կազմակերպության՝			
4.1 Անդամների թիվը			4
4.2 Կամավորների թիվը			
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը			3

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	ՀԱՅ ՖԵՍՏ միջազգային թատերական փառատոն	Երևան	2025թ. փառատոն	Ավարտված
2	Թատերական բուլվար փառատոն	Մոսկվա	Թատերախմբերի մասնակցության ապահովում փառատոնում	Ավարտված
3	Վդոխնովենիե փառատոն	Մոսկվա	Թատերախմբերի մասնակցության ապահովում փառատոնին	Ավարտված

4	Ժամադրություն թատերականի վրա փառատոն	Ռյազան	Թատերախմբերի մասնակցության ապահովում փառատոնին	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	ՀԱՅ ՖԵՍՏ միջազգային թատերական փառատոն	Երևան	Ավարտված	2025թ. փառատոն	2025թ. փառատոնի իրականացում

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	45,719,053
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	8,333,157	ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարություն
2	20,000,000	Երևանի Քաղաքապետարան
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	28,333,157	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	45,719,053
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		45,719,053

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	28,333,157
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		28,333,157

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	0	0	0
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____7_____ էջից

էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն և

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայ դերասանների միություն» ՀԿ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն …….....……3
Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն ……...…6
Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններ ……..…8

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայ դերասանների միություն» հասարակական կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայ դերասանների միություն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) պետական կամ համայնքային միջոցների օգտագործման վերաբերյալ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից հաստատված (Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվություն) ձևաչափով կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությանը կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով՝ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում «Հայ դերասանների միություն» հասարակական կազմակերպության 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար պետական կամ համայնքային միջոցներից ստացված և վճարված դրամական միջոցները՝ համաձայն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություն 2-ում ներկայացված հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության համար

Ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության՝ ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր ՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում,
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը,
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել

  Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված

աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռուզաննա Բաղդասյան

Տնօրեն/ առաջադրանքի պատասխանատու

26 մարտի 2026թ.

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայ դերասանների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) գրանցվել է 2000 թվականին, գրանցման համար՝ 211.171.991003 :

Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված գործունեության նպատակը՝

- Հոգևոր և ոչ նյութական պահանջմունքների բավարարում
- ՀՀ հասարակության ժամանակակից մշակութային զարգացում
- Մշակույթի ոլորտի հանրաճանաչություն և զարգացում
- Թատերական արվեստի, կինոյի և արվեստի այլ բնագավառներում ժամանակակից մեթոդների արմատավորում
- Ստեղծագործական նախաձեռնության և երիտասարդ արվեստագետներիինքնահաստատման աջակցում
- Ժամանակակից հայ մշակույթի կատարողական արվեստի կառավարման բնագավառի համար մշակութային տարածքների ստեղծում
- Նպաստում ՀՀ կարևորագույն մշակութային իրադարձությունների կոորդինացմանը, արվեստագետների միջև կապերի, փոխըմբռնման խթանմանը
- Տարբեր երկրներիհետ համատեղ ծրագրերի իրագործում
- Թատերա-երաժշտական շոու հանդեսների, փառատոնների կազմակերպում
- Հայ թատրոնի արժանիքների պրոպագանդում

Կազմակերպության գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Իսահակյան 28:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Համապատասխանություն

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով: Համաձայն հաշվապահական հաշվառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին, ծախսերը ճանաչվում են վճարման պահին:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը: Սույն Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը ներկայացված է հայկական դրամով:

2.3 Հարկեր

Ծրագրերի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.4 Ֆինանսավորում

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների տրամադրումն իրականացվել է ՀՀ կառավարության 2024թ.-ի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովվող միջոցառումների մասին» թիվ 2060-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

3. Իրականացված ծրագրեր

3.1. Հայ Ֆեստ 23-րդ կատարողական արվեստների միջազգային փառատոն

Համաձայն 2025թ. սեպտեմբերի 11-ի «Հայ դերասանների միություն» հասարակական կազմակերպության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված «ՄՎՆ» 17-25 պայմանագրի, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 14.01.2025թ .«Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 103-Ա որոշմամբ (Հավելված N8) և Երևանի քաղաքապետի 03.09.2025թ. N1049-Ա կարգադրությամբ սահմանված Երևանի քաղաքապետարանը պետք է հատկացներ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ:

Կազմակերպությունը Ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքպետարանից փաստացի ստացել է 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ աջակցություն և փաստացի օգտագործել է 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ ՀՀ դրամ:

3.2. Հայ Ֆեստ 23-րդ կատարողական արվեստների միջազգային փառատոն

Համաձայն 2025թ. մարտի 31-ի «Հայ դերասանների միություն» հասարակական կազմակերպության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև կնքված N ՄՇԴ-159-2025 պայմանագրի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը Կազմակերպությանը պետք է հատկացներ ՀՀ կառավարության 2024թ.-ի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովվող միջոցառումների մասին» թիվ 2060-Ն որոշմամբ սահմանված 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:

Կազմակերպությունը Ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից փաստացի ստացել է 8,333,157 (ութ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ աջակցություն և փաստացի օգտագործել է 8,333,157 (ութ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.03.2026 17:56